1936
891.99
U-76

19 NOV 2011

ՍԱՍՆԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

891.99 8
Ս-76 սկզբ.
1010/40145

ՎԱՇԱՆ ՄԻՐԱՔՅԱՆ

ԼԱԼՎԱՐԻ ՎՈՐՍԸ

ՊՈԵՄ

ՀՍԽՀ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1936

ՀՍՍՀ-ՍՍՌ

02.07.2013

43975

Պատ. խմբագիր՝ Սիրաս
Տեխ. խմբ.՝ [redacted]
Սրբագրիչ՝ Հ. Դոլուխանյան

Գլավլիտի լիազոր Հ. 1105, պատվեր 648,
Հրատ. 3711, տիրաժ 10,000
Պետհրատի տպարան,
Երևան, Ի Դեռնոնի, 4

Հանձնված է արտադրության 7 մայիսի 1936 թ.
Ստորագրված է տպելու 4 հունիսի 1936 թ.

ԳԻՆ 75 ԿՈՊ.

ВАГАН МИРАКЯН
ЛАЛВАРИ ВОРС
Гиз. ССР Армении, Эривань, 1936 г.

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔՅԱՆ

Վահան Միրաքյանը ծնվել է 1866 թ. Շուլավերում:

Ցերկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ Շուլավերում, Թիֆլիզում, ապա Ցերեվանում:

Միրաքյանի աչքի ընկնող գործը դա «Լալվարի վորսը» պոեմն է, վոր նա հրատարակել է 1901 թվականի «Մուրճ» ամսագրում: Այս պոեմայով նա հայտնի դարձավ գրական հասարակությանը: Պոեմը գրված է վարպետ գրչով և պատկերացնում է Լալվարի լանջին բնակություն հաստատած գյուղացիների նահապետական կենցաղն ու սովորությունները: Հովհաննես Թումանյանի յելկերի հետ միասին «Լալվարի վորսը» լրիվ կերպով մեզ գաղափար է տալիս Լոռվա գյուղացիության անցած-նահապետական կյանքի մասին,—այս հանգամանքն առանձնապես արժեքավոր է դարձնում այս պոեման:

Խորհրդայնացումից հետո այս պոեման սրանով հրատարակվում է 3-րդ անգամ:

Միրաքյանը վերջին տարիներում գրել է նաև մի շարք պիեսաներ գյուղական թեմերի համար:

ԱՌԱՋԻՆ ՅԵՐԳ

1

Ծագում է մանուկ արևը գարնան
Կովկաս լեռների ձյունի պատնեշից,
Զարթնում են մեկ-մեկ սարերն աննման
Զմրան անվրդով քնի մշուշից։
Ահա Լալվարի[1] վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ուժով,
Սարեր ու ձորեր իրար յերեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով...
Վերջին ձյուներն էլ արդեն հալ ընկան,
Արտասվեց խսկույն լեռների հսկան.
Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,
Ամեն մի թփից բյուլբյուլ է խոսում.
Յե՛վ դալար հովիտ, և՛ ժայռի կրծքեր
Արձագանք տալով գարուն են հնչում.
Զմրան փարախից հովվական յերգեր
Զեփյուռի թևով սարերն են թռչում։

[1] Լոռվա ամենաբարձր սարը։

Ծաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացվում է, ժպտում կոկոնից զվարթ,
Փարթամ դեղուքյան վոգին Գուգարքի
Շնչում է գարնան բույրով անաղարտ.
Ամպերն ել իրար համբույրներ տալով,
Զվում են կայտառ, Լալվարը գրկում,
Առաջին անգամ խիստ վորոտալով,
Գուգարք աշխարհին վողջույն են յերգում.
Ցեվ հայրենիքում փայլակ-կայծակի
Գիշերվա դրոշմած գաղտնի համբույրներ
Ցերգում են յերկրին սերը յերկնքի,
Դողում են սիրուց սարեր ու ձորեր.
Ցեվ խորհրդավոր մի թովիչ ձայնով
Խոսում են նրանք, իրար հետ փարվում,
Ցերգում են, խնդում, հազար բերանով
Լալվարի վիթխար հասակը գովում:

2

Ահա գարնան հետ և չարան-չարան
Դաշտավայրերից դեպի գով սարեր
Զգվեց սայլերի, ուղտերի քարվան—
Փախչում են շոքից թե թուրք, թե հայեր:
Թնդում են ձորում զանգի հնձյուններ,
Ձիերի խրխինջ, պայտերի դոփյուն,
Մեկ-մեկի կըցած անվերջ քարվաններ
Քաշում է նառը, ահեղ մռնչում.

Վորը տանում է ալաչխի[1] քեչան,
Կուժն ու խնոցին, ճիպոտն ու չաթան[2],
Վորն ել զարդարված գիր[3] ու փինջերով՝
Որորվում, անցնում լեռան լանջերով.
Բայց նառն ինքնագոհ քայլում է հանդարտ՝
Բոժոժ ու զանգեր վզին ու կրծքին,
Ցեվ որորելով կապերտներ ու զարդ,
Գեղեցիկ հարսն է նա տանում մեջքին.
Մերթ բարկանալով կանգնում է հպարտ,
Մերթ փրփուր թափում կատղած բերանով,
Մերթ յերկար շուրթը կախելով բարդ-բարդ,
Նա պարծենում է գեղեցիկ բեռով:
Բռնել է ճամփեն խիստ իրարանցում,
Դոփում են ձիեր, սանձերը կրծում—
Աղնիվ մետաքսից վոսկեթել գործած,—
Աղաջարիներ[4] թամքերին գըցած,
Հուժկու կրծքներից կապած թալիսման[5],
Արևելյան ճոխ արծաթն ու վոսկին,
Ձերմակ զաթիբան, քողն ամպի նման
Փըռփըռում են սիրուն հարսների դեմքին:

3

Լեռների տոնն է. մարդ և անասուն

---

1 Հովվական վրանի մեծ տեսակ:
2 Բարակ ճիպոտներից հյուսած վրանի ջրջապատ:
3 Թղթերում կարած չար աչքից ապահովող ազոթքներ:
4 Մետաքսից գործված ձիու ծածկոց:
5 Թղթերում կարած՝ չար աչքի դեմ ազոթքներ:

Ուրախ յերգերով դիմում են սարեր,
Մոռնալով ձմրան քաշած վայնասուն,
Ծաղիկ փնջերով անցնում են ձորեր.
Անցնում են արագ քոչ-քոչի միջով.
Գարնան արևից փայլում են դենքեր,
Յեվ թարմ կենսաբույր թավիշ կանաչով
Բացվում են, ժպտում սարվորի դեմքեր:
Մայում են, բայում գառնուկն ու մաքին,
Թնդում կովերի, հորթերի բառաչ.
Իսկ տրրտընդալով գոմեշը ճաղին
Կանչում է դանդաղ վազելով առաջ.
Վազում են հոգնած շները հոտի
Յեվ լեզուն հանած թանչին են տալիս.
Լսվում է հանկարծ ձայնը լակոտի,
Վոր քոչից ընկած՝ կալանչ է գալիս:
Փոքրիկ յերեխան պինդ մեջքին կապած
Խեղճ հովվի կինն ել վազում է վոտքով,
Ոգնում է մարդուն գոհ և սրտաբաց
Բախտի վորոշած ծանր վիճակով:

4

Քարվանի ծայրը սարերը հասավ,
Հասավ ու ձուլվեց թուխ ամպերի հետ.
Վրան-վրանի հետևից բսավ
Ծաղիկների մեջ գույն-գույն սիրավետ.
Դաշտերից խանձված, սառ ջրի կարոտ՝
Գալիս են, իջնում ամեն մի ամառ

Լոք[1], Լալվար, Լեջան[2] աղբյուրների մոտ
Շոքերից աղատ ապրելու համար:
Ալաչուխ դագա[3], անվերջ վրաններ,
Շրջան կազմելով սառն աղբրի ափին,
Ինչպես ծեր արծվի կարկատած բներ,
Հենվում են մեկ-մեկ բարձր քարափին:
Գուդարք սարերի սիղավետ լանջին
Բազմել են հայի, թուրքի բինաներ,
Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին՝
Դեռ յերերում են ուղտի քարվաններ.
Խրխնջում է ձին, կովը բառաչում,
Բոլորն ել իրանց յուրդն է՛ն ճանաչում.
Մայում է անուշ ամլիկը[4] գառան.
Սարեր ու ձորեր նորից կյանք առան:

5

Գիշերը հասավ. մթին է ճամփան.
Մարում է կամաց աղմուկը քոչի.
Առվակի ափին քարվաններն իջան.
Կանչում են՝ «Տղերք, ապրանք չկորչի»:
Ձիերի ջոկեր, ուղտերի քարվան,
Սայլերի ճռռոց, վոչխար ու տավար,
Գտնելով ձորում գիշերն իջևան,

1 Լոռվա սարերից մեկը։
2 Լոռվա սարերից մեկը։
3 Հովվական վրանի փոքր տեսակը։
4 Մոր հետ անբաժան ապրող և ծծող գառ։

Հանդիսատ են առնում մյուս որվա համար:
Կրակի վրա, առվակի ափին
Մի տեղ ընթրիք են չտապ պատրաստում,
Մի տեղ էլ կորած գառանն ու հորթին
Սար ու ձոր ընկած հովիվն է կանչում
Մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝
Ուտում են նրանք կաթն ու խորոված.
Գիշերն էլ արդեն մնջում է, լռում,
Հոգնած քոչվորին հանդիսատ քուն բերում.
Միայն մի կով է դարձյալ բառաչում
Ցեվ քունը կորած հորթուկին կանչում.
Լսելով նրան գիշերն անդադար,
Հևում է տխուր ծերունի անտառ:
Ամպի փեշերն էլ կախած մի ծայրին՝
Լալվարն էլ կարծես նույն վիշտն է զգում,
Ինչպես վիրավոր արծիվը ժայռին,
Թևերը փռած քոչվորին հսկում:

6

— Լսե՞լ եք, տղե՛րք, ո՛ւմ ալաչուխն է
Լալվարին բաղմած արծվի նման.
Լսե՞լ եք՝ են ո՛ւմ ոչախի ծուխն է
Խեղճ ու նաչարին միշտ լինում դարման.
Լսե՞լ եք՝ ինչպես բաղեն ինքնակամ
Նրանից ազատ վորս չի պրտրտում.
Նրա մի ձենը, անունը անդամ
Մարդուն, հարամուն սարսափ են ազդում:

Ցեվ ուզում է միշտ ամեն մի սարվոր
Են ալաչուխին լինել դրացի,
Հիշելով նրա տիրոջն ալևոր,
Առանց որհնելու չի նստում հացի:
— Շատ բան ենք լսել Ավագի մասին,
Բայց դեռ կարոտ ենք նրա յերեսին,
Քնած թե արթուն, թեկուզ յերազում
Ամենքն էլ նրա մասին են խոսում.
Պատմում են ահով դաշտին ու սարին,
Թե ինչպես է նա պատժում միշտ չարին,
Թե ինչպես երեն փախչելիս հովտում
Հեռվից էլ նրա ձենն է ճանաչում.
Բայց, ապի՛, ապի՛, չենք տեսել նրան,
Ցերգի՛ր Ավագից մի քանի բերան.
Մենք կոտանք առատ քեզ յեղ ու պանիր,
Դու իգիթներին լավ դովարանիր:
Ցեվ նա լարելով նորից սիմերը,
Ցերգում է՝ վորքան քաջ են հները.
— Ավագ վորսականի անունն է մենակ
Սարերին հայտնի ամեն մի մարդու,
Ավագ վորսկանի դոչյունն է մենակ
Լալվարի գոռող վորոտից ազդու.
Մանուկ որերից նա վորբ մնալով,
Ապրել է ինչպես սև ամպը սարին.
Որոր է յերգել քամին սուլելով,
Ցեվ նա ննջել է մամռոտած ժայռին.
Մթին ձորերի ահավոր կիրճում
Սիրել է թանձր վառոդի ամպեր.

Ուր փայլակ-կայծակ մահ են շառաչում,
Գրկել է կայտառ սլաք ու շանթեր.
Ընկերն է յեղել մի հին հրացան,
Իսկ անուշ յերդը՝ դնդակի բզզոց.
Թշնամու ջարդը, ահից ցիր ու ցան,
Հարան-տարանը և տուր ու դմբոց:
Թեև նա ծեր է, ուժասուն տարեկան,
Բայց նրա նման չկա մի վորսկան.
Աչքի լուսի պես դեռ զենք է սիրում,
Ցերկնքի ծոցից ել վորս է բերում.
Դեռ հեծնում է նա ձին արագավազ,
Սև ամպերի հետ թռչում սար ու ձոր,
Դիտելով լուսնի սահը նազենազ,
Հիշում իր թափած արյունը ծործոր.
Անցնում է ձգված անտառի խորքում
Նեղ ոճապատույտ ժայռոտ կածանը,
Վորից հոսում է, առուն աղմկում
Կամ թե դղրդում խուլ հրացանը,
Ուր միշտ ծարավի թշնամու արյան՝
Նա թափառելով գիշերը անահ,
Մռայլը դեմքին դժոխքի նման
Նամարդի համար պատրաստել է մահ...
Ձիրուխի վրա կրակ դնելով,
Աչուղը կարեց իր յերգի թելը.
Իսկ մեկն ել այսպես նրան հարցնելով,
Կրակին դարսեց նորից փայտերը:
— Բա՛, ապի՛, ապի՛, դեռ չե՞ս իմացել,
Մի նոր իգիթ կա սարերը ընկած,

Ավազակ-վորսականից հետ չի մնացել,
Դեռ նրա պես քաջ աշխարհ չի յեկած.
Ջահելներիս մեջ նրա հասակում
Վոչ վոք չի յեղել ենպես շնորհքով.
Ասածո գիշերը անցնում է, զարկում
Ամենահարուստ բեգի որեքով.
Արյուն է կաթում են որը սրտից,
Թե վոր չի թռցնում ձի, տավար հանդից.
Վո՛չ ազգ ունի նա, վո՛չ տեր-տիրական.
Կարո յե նրա անունն իսկական.
Ել բեգ չի մնում, վոր չթալանի,
Նրան ասում են «Դալի-երմանի».
Ել նրա ահից, հարան- տարանից,
Հեռու չեն քշում ապրանքը տանից:
Մինչդեռ խոսում եր Կարոյի մասին
Վառ հափշտակված յերիտասարդը,
Աչուղը կանչեց, զարնելով սազին.
— Դե՛, տեսե՛ք, վո՞րն է քաջ
տղամարդը.—
Լսել եմ, գիտեմ եդ ավազակին.
Բայց ո՛ւր դող Կարո՛, ո՛ւր Ավազ-վորսկան.
Ավազն է՝ ինչպես Լալվարն ահագին,
Կարոյի նման բլուրներ չատ կան.
Թեև մարդիկ է Կարոն կողոպտում,
Ձի, տավար հանդից քշում ու փախչում,
Բայց դուք ջահել եք, Ավազ-վորսականին
Ինչպես վոր հարկն է, չեք ել ճանաչում.
Կարոյի նման ձիու գողերին

Նա իսկի մարդու տեղ էլ չի դնում։
Վորսկան եմ ասում վոչ թե արջերի,
Վոր տանձ ուտելով ապրում են մերում.
Վորսկան եմ ասում ավազակների,
Վորոնք սարերին փորձանք են բերում.
Վորսկան եմ ասում, վոր ամեն չարին
Մատաղ է անում կարմիր գնդակին.
Վորսկան եմ ասում, վոր խեղճ-նաչարին
Պահում է սիրով իր թևի տակին,
Վոր ինչպես ձյունը ամպամած սարին
Գլուխ չթեքած նամարդի սրին՝
Մի դաս է առել լեռներից դաժան—
Արյան վրեժը արյունով առնել,
Քնած թե արթուն գենքից անբաժան՝
Թշվառի սիրով ապրել ու մեռնել.
Վորի ձենից էլ գնդակ է բզզում,
Անցած ճորից էլ արյուն է հոսում,
Ցեվ միշտ վառոդն է ամպերով բուրում,
Կայծակի նման շանթում, խորովում...
Այսպես բարի յե Ավազ-վորսկանը—
Խոսքը որենք է, գործը՝ հաղթություն.
Նա տարածում է դուրսը թե տանը
Իր ազգու ձենով սեր ու հաշտություն։
Ցերը լռեց ծերի սաղը ղընդալով,
Սարերից ճորեր արձագանք տալով,
Տղերքը նորից խնդրեցին նրան.
— Ա՛պի ջան, ա՛պի, յերգի՛ր վորսկանից.
Սիմերդ անուշ, դու քաղցրաբերան,

Մենք չենք հեռանալ քո սազի ձենից։
«Ավազ-վորսկանի արած գործերը
Շատ են ու յերկար, սկսեց ծերը.
Բայց յես կպատմեմ շատերից մեկը,
Թե ինչպես փախավ վորսկանից բեգը։
Սրանից կլներ տաս տարուց էլ վաղ,
Դրացի յեր մեզ Սալմանի որեն[1]
Թալանում եր նա աջ ու ձախ անվախ,
Աղա յեր նրա ամեն մի գյադեն[2]։
Մի որ դուրս յեկավ Սալմանի բուղեն[3],
Գոռալով վազեց ինչպես հրեղեն.
Ցեկավ վոր քշի մերին տավարից.
Մերն էլ բարկացավ նրա հավարից՝
Մի քիչ կովերից գնաց, հեռացավ,
Բուղադոռ տալով, նրան մոտեցավ.
Դեռ գոռգոռալով յերկուսն էլ կրծքից,
Հեռվից բարկացած կանչեցին իրար.
Վազելով յեկան թուրք, հայ որեքից՝
Մեծ բուղակովին նայելու համար.
Խառնվել են միմյանց մեր, մանուկ ու ծեր,
Հրա-հրի ձայներ, հա՛յ-հո՛ւյ, դըղրդյուն,
Ամեն կողմերից լսվում են հարցեր.
«Վորն է յերկուսից տանում հաղթություն»։
Ցերկու բուղեն էլ ահեղ գարկերով,
Պղերով, վոտքով դեմին են փորում.

1 Վրանների խումբ։
2 Ծառա։
3 Ցուլ։

Ցերկու բուղեն ել ուռած կրծքերով
Հպարտ բչալով, կռիվ են գոռում.
Մեկ պինդ վոլորած պոչն ոձի նման
Լախտ արած ուժգին՝ դեռինն են ծեծում,
Մեկ ինչպես վերջին ահեղ հրաման,
Նորից հերսոտած կռիվ են բչում.
Սալմանի բուղի մընդալը[1] փըրփրում,
Տեսնողի վրա սարսափ է բերում.
Հանկարծ յերկուսն ել նայելով խեթ-խեթ,
Դեռ կոթանելով[2], գնացին հետ-հետ,
Ցեվ նորից յեկան պատրաստի զարկով,
Մոտեցան միմյանց դեմ ուված կողքով.
Մընդալն ու պոզեր տալով պահապան,
Ցերկու ճակատներ դեմ յելան, կպան,
Թըրա՛խք, հա՛, թըրո՛ւխք պոզերով, դանդով
Ջարդում են իրար անխնա զարկով:
Խառնվում են նորից բեգ ու սարվորներ,
Նայում են կռվին սրտի տրոփով.
Թնդում են նորից հրո-հրոի ձայներ.
Ցեվ բուղաները զարնվում են թափով.
Փահլևանի պես հենց են պըտըտվում,
Վոր կուրծք ու ճակատ փրփուր է պատում.
Դեռ չըրըխկում են, զըրըխկում զարկեր,
Սալմանի բուղեն հետ-հետ է նայում:
Կրծքին ու կողքին բացվել են վերքեր,
Բայց նա յերկյուղից դեռ չի հեռանում:
«Զոռե՛ց, հա՛, զոռե՛ց,» հանկարծ գոռացին.

[1] Ուսը [2] Պոզերով սպառնալով:

Սալմանի բուղեն զըրըխկաց դեռին.
Մեր բուղեն ենպես գոռաց ու բչաց,
Վոր նրա ձենից սար ու ձոր թնդաց.
Իսկ բեգի հաղթված բուղեն հևալով,
Վեր կացավ հազիվ, գնաց կաղալով:
Ցերը մենք պարտվածին ծաղր ու ծանակով
«Ղո՛ւ» եյինք տալիս, թքում ու մըրում,
Բեգը կոտրված մեր հաղթանակով՝
Նոր կռվի համար ատամ եր սրում.
— Ես բուղակռվի ամոթի մրից
Մենք չենք ազատվիլ վոչ մի ժամանակ,
Մինչև վոխ չառնենք ե՛ն բինաներից,
Մինչև վոր չուտեն նրանք դաղանակ:
Հենց վոր լսեցին վերջին խոսքերը,
Կամեջ արին մեզ դաղանակներով.
Թրերը հանած՝ հասան բեգերը
Ու վրա տվին թունդ աղմուկներով:
Քար ու դաղանակ ամենքի ձեռքին՝
Իրար դեմ յելան տղամարդ ու կին,
Ցերկու կողմերից կարկուտից վարար՝
Քարերով, փայտով ջարդում են իրար,
Հենց վոր բեգերը հաղթված սարվորին
Քշելով, հասցրին արխաջի[1] ծերին,
Հանկարծ սարիցը մի ձեն վորոտաց.
«Ո՞ւր եք փախչում, ո՞ւր, դեռինը մատած.
Մի՛ք, վախիլ, տվե՛ք, տվե՛ք բեգերին,
Վոր հանդիստ թողնեն ձեզ ես սարերին»:

[1] Անասունների բացվելու հանդստյան տեղ:

Լալվարի վորոշ 2

ՀՍԽՀ-ՍՍՀ

—Փախե՛ք, հա՛, փախեք, վա՜յ, կանչեց բեղը,
Ավազ-վորսկանն է սարիցը վազում.
Փախե՛ք, հա՛, փախե՛ք մտե՛ք դաղեքը,
Նրա հետ կռվել մեզ ել չի սազում:
Ել չունչ չմնաց դուրսը վոչվո՞քից,
Ավազն է նրանց դեռ կանչում դաղից.
«Ո՞ւր եք փախել, ո՞ւր, ե՜յ, դուք՝ նամարդներ,
Դո՛ւրս յեկե՛ք, տեսե՛ք ձեր հոգեառին,
Թե չե կպոկեմ բինա-դաղաններ,
Ձեմ թողնիլ մեկիդ չունչը բերանին»:
Բեգերից վոչ մի խղիթ դուրս չեկավ.
Սալմանի հայրը կորացած մեջքով
Ցեկավ վորսկանի վոտները ընկավ,
Ու նա հեռացավ ծերի խնդիրքով...
Ցեվ վառ խարուչկի շուրջը բոլորած՝
Տեսած ու լսած արկածն են պատմում,
Ցեվ մեծ ու փոքր ականջները լարած՝
Աչուղ-Գիքոյի յերգերն են լսում.
Պատմում ե, յերգում աչուղն անցյալից,
Ձորերում տեսած հին խղիթներից.
Կրակին դցած կաղնի մեծ գերան՝
Սարվորն ել արթուն լսում ե նրան:
— Են որից ես որ բեգերն ամոթով
Հանեցին գլխից կռվի մտքերը.
Պատմում են թուրք, հայ՝ ահ ու սարսափով
Ավազ-վորսկանի արած գործերը.

Պատմում են, վոր նա ինչպես զորավար
Թիլիսը ունի չար դև ու սուրբից,
Վոր նա չի լինիլ գնդակի ավար,
Վո՛չ ել կմեռնի նա մարդու ձեռքից.
Վոր յերկու բան ե Ավազ-վորսկանը
Ամենից մոտիկ պահում իր սրտին—
Մեկը Ղրիմու հին հրացանը,
Մեկն ել մինուճար սիրուն Ալ-վարդին.
Ու դրանց հետը ժանտ ոձի նման
Ցեվ մի լուռ վիշտ ե միշտ նրան կրծում,
Վոր աստված տղա չտվեց նրան,
Վոր Ավազ անունն պահեր իր ազգում.
Վոր միշտ տեսնելիս սիրուն Ալ-վարդին,
Զգում ե նա իր դատարկ վախճանը,
Ցեվ սև մտքերը փաթաթած սրտին՝
Տանջում են նրան դուրսը թե տանը:
«Մի որ աղջիկս յես մարդու կտամ,
Ինքս ել ծերացած աչխարհից կերթամ.
Հրացանս կմնա պատիցը կախված,
Ժանգում ու փոշում անբան չաղախված,
Ցերկար խանչալս ել, արծաթով պատած,
Վախկոտի մեկը կառնի իր փողով,
Հաղար փորձանքի արնով աչխատած
Անունս ել հետը կծածկի հողով.
Սիրուն Գուդարքն ել առանց պահապան,
Քանդելու կգա ամեն մի անբան.
Ել չեմ դուրս գալ յես խոր գերեզմանից,
Ել չեմ դցիլ իմ հին հրացանից»:

Յերկնքի գրկում լողում է լուսին,
Դեռ նստոտած են ծեր, յերիտասարդ,
Ավագ-վորսկանի, Ալ-վարդի մասին
Խարույկի շուրջը լսում են հանդարտ։
Կաղնի գերանը կրակին ընկած՝
Առատ բոցերով դեռ լույս է սփռում.
Ճարճատում է նա, բռնկում հանկարծ,
Հետն ել աշուղի յերգերը վառում.
Տեսած ու լսած անթիվ դեպքերով
Ցեվ մեկը մյուսից արժան գործքերով
Դեռ յերգում է նա և այն հաստատում,
Վոր առաջինն է Ավադն աշխարհքում,
Նրանից իգիթ, նրանից հսկա
Ել թուրքում, հայում, վո՛չ մի տեղ չկա.
Ցեվ ուշի-ուշով նստոտած համառ՝
Խնդրում են նորից տղերքն աշուղին.
«Ա՛պի ջան, ա՛պի, յերգի՛ր մեզ համար,
Ել չենք քնելու մենք լուսնի շողին»։
Բոլորի ուշքն ել վորսկանը տարավ,
Մարում են կամաց խարույկի կայծեր,
Ջահել տղերքը դեռ յերգի ծարավ՝
Ավելցընում են կրակին փայտեր.
Վորը հոգնելուց գլուխը թեքած՝
Նիրհելով կամաց, զարթնում է հանկարծ,
Վորն ել վաղուց է անուշ խրոռացնում,
Ավադ-վորսկանին յերազում տեսնում։
Յերկնքի գրկում լողում է լուսին,

Ննջում են արդեն ծեր, յերիտասարդ,
Ավագ-վորսկանի, Ալ-վարդի մասին
Լուսինն է խորհում յերկնքում հանդարտ։

ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵՐԳ

1

Արևը չելած՝ սարվորն արթնացավ,
Նորից ճորերում աղմուկ բարձրացավ,
Նորից սայլի տակ ճրդռում է ճամփան,
Փրուփրուում հարսի քոդն ու զաթիբան.
Դալար յուրդերը ամպերի տակին
Աչքերը գցած քոչվորի ճամփին՝
Ժպտալով հակինթ ցողերով առատ,
Կանչում են կարծես բույրով անարատ։
Կանաչի վրան ավթավան[1] ձեռքին
Կրոնասեր թուրքը չոքեց նամազի,
Ձեռները դդուչ տանելով միրքին՝
Աղոթք է անում աստծուն մեկուսի։

2

Կես որ է արդեն. կանաչ Լալվարից
Իջնում է հանդիստ վոչխարը կթի.
Կթվելով մաս-մաս, անցնում է բերից[2],

[1] Ջրամանի տեսակը։
[2] Վոչխար կթելու տեղը։

Լսվում է անուշ վըշշոցը կաթի։
Հովիվ, հովվուհի նստոտած շարքով՝
Կթում են ուրախ և անհոգ խնդում,
Ցերբեմն էլ այրված անուշիկ յերգով
Սեր են զարթեցնում մեկ-մեկի սրտում։
Վերջացավ արդեն վոչխարի կիթը,
Կաթսաներ տարան թարմ կաթնով լիքը։
Մեկն էլ գդակը շարժելով ոդում,
Դեռ գառնարածին՝ «հե՛յ, յեկ» է կանչում։
Ցերկար չանցնելով, սարի գագաթին
Գառների կայտառ հոտը յերևաց։
Խառնվելով նրանք մայրերի հոտին,
Բերկրանքի հույզով մայում են ցրված։
Կանչում են, բայում գառն ու մաքին,
Անուշ ձայներով փնտրում են միմյանց։
Վորը գտնելով իրա գառնուկին,
Ծծել է տալիս, փայելով սրտանց։
Վորը խաղում է մոր հետ կուշտ փորով,
Վորն էլ մնում է տխուր մայելով։
Ցեվ ամեն անգամ գառը մեր տալիս[1],
Կարծես թե անուշ համերգ են տալիս։
Ցեվ շուտ ջոկելով մայրերը գառնից,
Հովիվը քշեց նրանց դեպ արոտ,
Մհակն էլ ուսին գառները բինից
Տարավ գառնարած սառն աղբյուրի մոտ։

1 Մայրերին տալիս—ծծեցնելիս։

Հովիվ, գառնարած մի տեղ խմբվելով,
Լախտի յեն խաղում, առույգ թռչկոտում։
Հրճվում են նրանց կայտառ խաղերով
Ծերերը ծածկված գառան մուշտակում։
Ամեն մի նրանց ճարպիկ թռիչքով
Հիշում են վաղուց կորած մանկություն,
Շոյելով ճերմակ միրուքը ձեռքով,
Կանչում են՝ «նամա՛րդ, նամա՛րդ
ծերություն»։
Մեկն իր մուշտակը մի կողմն է ձգում
Ցեվ դիտմամբ խառնվում տղերանց խաղին,
Մի լախտ է խլում, վոլորում ձեռքում
Ցեվ առիթ տալիս անվերջ ծիծաղին։
Կանչում են. «Աթո՛, լախտը թողրո՛ւ,
Մեր պապի մեջքը մի լավ տաքացրո՛ւ»...
Աթոն էլ լախտը վոլորած ձեռքին՝
Տանում է, բերում մեր պապի մեջքին...
Մի տեղ ձիերը տրանդի տալով,
Փըռռացնում են, սարերը փախչում։
Ջահել տղերքը քամանդ[1] բռնելով
Նրանց հետևից սյուրաղ[2] են թռչում,
Մի խամ, չնստված վայրի քուռակի
Ամեն կողմից էլ կալմեջ են անում։

1 Քամանդ—ձի բռնելու պարան։
2 Ձիարշավ՝ առաջ ընկնելու նպատակով։

Ով նրան մենակ բռնի ու թամքի,
Նա մի քալաղի նամառ[1] է տանում.
Բայց տաքացել է, կատաղել խամ ձին.
Տղերանց վրա ծառս-ծառս[2] է լինում.
Ցերկաբ քամանդը քաշելով վզին,
Խեղդում են նրան և թամքը դնում.
Զուռնեն ել՝ թողած մի կողմը լախտին,
Փչում է արդեն տաք-տաք Ջիրիդին.
Տղերքը միմյանց առաջ են քշում,
Ծերերը դարձյալ խոր ախ են քաշում:

4

Հարս ու աղջկերք սափորը ուսին՝
Գնում են խումբ-խումբ աղբյուրը ջրի
Դողում են նրանց ժպտուն յերեսին
Բոլոր գույները Գուգարք լեռների.
Ցեվ բյուր ծաղկանիշ նախշուն շորերով
Անցնում են նրանք ուղին հոտավետ,
Ցեվ թարմ կուսական հմայիչ բույրով
Մրցում են սարի ծաղիկների հետ:
Ցեռում է խաղը հարսների դիմաց,
Նայում են միմյանց աչքերի տակով.
Կարմրում են, ժպտում կույսերը կամաց,
Անցնելով անուշ սիրո տրոփով:

---

[1] Մրցանակ է տանում:
[2] Հետին վոտների վրա կանգնում—ծառանում:

Բայց, ա՛յ քեզ հրաշք, մի չչուկ անցավ.
«Ալ-վա՛րդն է գալիս, Ալ-վա՛րդն է գալիս».
Ցեռուն Ջիրիդը խկույն դադրեցավ,
Բոլորն ել սառան նրան տեսնելիս:
Հուր-հրին տալով քողի արանքից,
Նրա աչքերը հանեցին խելքից.
Ել վոչ Ջիրիդ կա և վոչ ել զուռնա.
Ալ-վարդի նետին ո՞վ կդիմանա.
Ջիրիդներն ընկան հուժկու ձեռքերից,
Ախ ու հառաչանք թռան կրծքերից.
Զուռնան ել մոռցած լախտն ու Ջիրիդին՝
Նրանց տեղ ղլեց այրող բայաթին.

Ջեյրանի նման
Բինից դուրս գալը,
Սափորը ուսիդ
Սարին սուրալը,
Ա՛խ, եդ աչքերիդ
Վառվռուն հուրը,
Սիրուն պատկերիդ
Նոր կյանքի բույրը,
Շուրթերիդ բացվող
Վարդը ժպտալիս՝
Մեզ, սիրուն աղջիկ,
Հանգիստ չի տալիս:
Ա՛յ, սիրուն աղջիկ,
Ա՛յ, սարի աղջիկ,
Շուտ-չուտ դուրս արի
Աղբյուրը ջրի:

Մեն-մենակ դու յես
Ծաղիկը սարի,
Մեն-մենակ դու յես
Զարդը աշխարհի։
Առանց քեզ սարին
Հատնում է բույրը.
Առանց քեզ աղբրում
Ցամքում է ջուրը։
Ծաղիկ ու զալար,
Աղբյուրը զուլալ,
Սուրալով արի՛,
Շունչ տուր, զարդարի՛։
Ա՛յ, սիրուն աղջիկ,
Ա՛յ, սարի աղջիկ,
Հասիր մեզ սիրով—
Սափորիդ ջրով։
Ա՛խ, մեր սրտերը
Վառել ես հրով,
Բայց դեռ ապրում ենք
Հեռվից քո բույրով.
Ապրում ենք, ջե՛յրան,
Ցերդերի բոցում,
Ինչպես բյուլբյուլը
Վարդերի ծոցում։
Զահել սրտերում
Քո վառած հուրը
Չի մարում, աղջի՛,
Սափորիդ ջուրը։

Ա՛յ, սիրուն աղջիկ,
Ա՛յ, սարի աղջիկ,
Թեկուզ մեզ վառի,
Շուտ-շուտ ջուրն արի՛։
Ալ-վարդի համար ա՞խ են հառաչում
Գուզարք լեռների ամեն մի ձորից,
Ալ-վարդի համար մեղուն է թռչում
Լոռվա առաջին խամ մեղրի ծորից.
Ուտում են աչքով ամենքն Ալ-վարդին,
Բայց սերն անհայտ է դեռ նրա սրտին.
Նա դեռ ապրում է յերազների մեջ,
Դեռ նրան այրել չի սերը անչեջ.
Բայց են ել ասած՝ Ավադի ահից
Ո՞վ կարա անցնել Ալ-վարդի մոտով,
Կամ թե փախցնել նրան աղբյուրից՝
Ո՞վ կարա խոկի անցկացնել մտքով։

5

Սև սավերները հսկա լեռներից
Զորերն են ընկել, մեկ-մեկի դրկել,
Լուսնի յեղջյուրը մռայլ ամպերից
Հալածված դեմքը դեռ չի ազատել,
Թանձր յեթերյան սև քողը դեմքին
Վազվզում եր նա սոված ու անքուն
Նայելով հերթով բոլոր ոբեքին,
Հսկում եր նրանց գիշերը արթուն.
Որոր եր յերգում առուն ձորերում,

Մարում էր մեկ-մեկ կրակն ոբեքի,
Բայց ականակիը սարի խավարում
Մենակ մի՛ կայծ էր դողում ճրագի։
Ղարախաչ[1] սարի գիժ գագաթներին
Լուսինն էլ գերի մնաց ամպերին։
Այնտեղ ծովիանն է խաղում, վորոտում,
Հրեղեն գոտին յերկնքով պատում։
Շրփչրփաց անձրև։ ամեն մի տեղով
Առուներ դառան պղտոր հեղեղով։
Զարթնելով քնից սարվորը հանկարծ,
Ամրացրեց դագի հին ծակ ու ծուկը։
Տավար ու վոչխար իրարով ընկած՝
Խառնեցին միմյանց գառն ու հորթուկը։
Հովիվը հասավ ազդարար ձայնով
Հավաքեց նրանց դեպի արիաջը,
Բայց դեռ լսվում էր տխուր ոռնալով
Դոլանից[2] փախած շների հաջը։
Սարեր ու ձորեր ահից դողալով,
Արձագանք տվին փայլակ-կայծակին։
Լեռների վորդին մթին գիշերով
Անցնում էր հեղեղ՝ մի սև ձի տակին։
Զին առանց զարդի, սանձի ու թամբի
Ցատկում էր արագ ժայռերի վարսեր,
Ինչպես մի ստվեր սևակնած ամպի,
Թռչում էր դետեր և դար ու փոսեր։

[1] Լոռվա և Շիրակի սահմանում ձգված բարձր սարը։
[2] Շան նստելու և հոտին հսկելու տեղը։

Իսկ դոփյունները պինդ սմբակներից,
Արձագանք տալով խորին ձորերում,
Կայծին են տալիս և հանկարծ մարում։
Ոնգներից ամպի փրփուր է հոսում,
Խառնվում պղտոր վշշան հեղեղին։
Զին իր հեծվորին այնպես էր սաղում,
Ինչպես, վոր նետը իրեն աղեղին։
Գոռում էր, ճչում ահավոր կիրճում
Փրփրած բաշով սևացած ուրկուն[1],
Բայց ձիավորը մի աղոթք մտքում՝
Դեռ մրմնջալով, քշում էր անքուն։
«Ես ուրկունիցն էլ թե դուրս թռավ ձիս,
Մուրազ եմ անում գնամ Սուրբ Սարգիս։
Հասվեհաս եմ հա՛, ճրագ եմ տեսնում,
Գիշերս կմնամ Սառն-աղբրի բինում։
Հենց վոր անձրևը մի քիչ դադարի,
Նորից կբռնեմ ճամբեն անտառի»։
Աչքերը հառած բինի ճրագին,
Հեծվորն էր այդպես ձիուն մրմնջում,
Նրա սև բաշը վոլորած ձեռքին,
Կարծես ուզում էր հասնել մի չնչում...

6

Փռռացրեց սև ձին, դոփեց սմբակով,
Նետի պես ցցվեց արիաջի ծայրին,

[1] Հեղեղից առաջացած մեծ դետ։

Մի չուն գոյանից վեր թռավ հաջով
Ցեվ թարշարժ արավ քնից սարվորին.
Շներն աղմուկով գայրացած հասան,
Այն ձիավորին կամեջ արեցին.
Իսկ հովիվները՝ «Ո՞վ ես» ու «քիմ սան»
Նրան խավարից մեկ-մեկ ձայնեցին:
— Մթին գիշեր է, կորցրել եմ ճամփես,
Պատասխանեց նա, հյուր եմ յեկել ձեզ:
Ութսունից մոտիկ վեհ, բարձրահասակ,
Հերքը ալևոր, ձյունից ել ճերմակ,
Արծաթապատյան դաշույնը գոտկին,
Հին արկածների կնճիռներ դեմքին,
Սև-մազ յափնջին ուսերին բաղմած,
Ցերկար չիբուխն ել բերանին սեղմած,
Կանգնելով ծերը ալաչխի շեմքին՝
Խրոխտալի ձայնով կանչեց ճամփորդին.
«Ցե՛կ, ճամփորդ ախպեր, արխաջի մոտով,
Դուրսը անձրև է խառը կարկուտով.
Մինչև չնստես դո՛ւ յել իմ տանը,
Պատառ չեմ դնիլ յես իմ բերանը.
Ցե՛կ, ա՛խպեր ջան, յե՛կ, զոնաղն Աստծունն է,
Անմեռ աշխարհն ել իդիթ մարդունն է»:
Հեծվորը յեկավ ծերի հրավերով,
Սև ձին ել տակին սև ամպի նման,
Ուռած ոնգներից թառանչ քաշելով,
Թռավ ու կանգնեց նրան հանդիման:
— Բարի իրիկուն, ասաց նա, սարվո՛ր,

Վատ որ չտեսնի գլուխդ ալևոր.
Թո՛ղ վառ լինի միշտ բինում ճրագդ,
Թող տակը չառնի վերջին գնդակդ:
«Բարին արևդ. համեցե՛ք, վո՛րդի,
Թո՛ղ ձիդ որյուկի[1] հանդոմը ծառան,
Դու յե՛կ անձրևից ալաչուխ մտի.
Ալ-վարդ ջան, վե՛ր կաց, դու յել տաքարան,
Վորսի խորոված շամփրի՛, պատրաստի,
Կուշտը սովածին մանր կբրդի»:
Այդպես պատվերներ տալով Ալ-վարդին,
Ալաչուխ տարավ ծերը ճամփորդին,
Վորի յափնջից ծորում եր ջուրը,
Ինչպես մամռոտած ժայռից աղբյուրը.
Բայց նա թափ տալով չորերը շեմքին,
Մոտեցավ նստեց ծերունու կողքին:
Թուրն ու դաշույնը կեռ արծաթապատ,
Գնդակ-վառոդի ամանը գոտկին,
Զախմախի հրացան զուգված տասնարանդ,
Շահմար[2] ոձի պես լուռ փարված մեջքին,
Զենք ու զրահում, արծաթում մտած՝
Ճրագի լույսով հյուրը չողչողաց:
Սերն ու կարոտը առաջ բերելով,
Ալ-վարդն յեկում է դեռ տաքարանը.
Մի քանի խոսքով սուփրեն որհնելով,
Ծերունին դարձավ աղոթարանը:

---

[1] Որյուկել՝ արածելու համար կապել յերկար թոկով։
[2] Ոձերի թագավոր։

— Թո՛ղ նրան տանի սելամն ու գետը,
Ո՛վ աղ ու հացի որենքն ուրանա,
Ո՛վ զոնաղ յեկած թշնամու հետը
Չի նստիլ ուրախ մարդի-մարդանա[1]։
Թշնամի կլնես թե ինձ բարեկամ,
Դուռս բաց կլնի քեզ ամեն անդամ։
Քանի վոր կուզես իմ ալաչուխում
Սիրտդ բաց՝ արա ինձ հետ կերուխո՛ւմ։
Ցերը շամփուրները մեկ-մեկ շարելով,
Դարսում եր կույսը կարմրած չեղջին,
Կամ խորոված ը արագ շրջելով,
Բերում եր, դնում հյուրի առաջին,
Յոլուն աչերը հոնքերի տակից
Ընկնում եյին միշտ փայլուն զենքերին
Ցեվ ալեծածան մազի արանքից
Նա գաղտագողի դիտում եր հյուրին։
Խիտ դանդուրները հանկարծ ցնցվելով,
Մերթ այտերն եյին վարդի պես փայլում,
Մերթ շամփուրները նորից շարելով,
Հյուրի սիրտն ել եր նա հետը այրում։
Ցե՛վ անքնություն, և՛ յերկար ճամփեն
Վերացան իսպառ ճամփորդի մտքից։
Սև-սև աչքերը շանթելով արդեն,
Անցան շեշտակի սուր նրա կրծքից։
Մոռացավ ինքն իրան, յերկիր ու յերկին,
Ցերերաց անուշ, անսովոր դողով,

1 Ցղամարդորեն։

Ցեվ կյանքի գնով զողցած նժույգին
Նա մոռցավ միայն յերկու աչերով։
Տեսնելով հյուրի թևի արյունը,
Ծերունին հարցրեց նրա անունը։
«Ինչի՞ չես, վորդի, դարդդ ինձ ասում,
Եղ ի՛նչ արյուն ե թևիցդ հոսում։
Ցե՛կ, դու մի՛ ծածկիր, անունդ ինձ բախչի,
Չեմ թողնիլ, վոր քեզ եղ ցավը մաշի։
Ավագ վորսկանն եմ Գուդարաց յերկրի,
Կռիվների մեջ հերքս ճերմակած։
Քեզ նման յես ել հազար վերքերի
Խոռոչներ ունեմ մարմնիս ընկած»։
—Ցեր ինքը հաստատ պահի քո տունը,
Վաղուց եմ լսել քո մեծ անունը։
Զախ թևիս միջին դնդակ ե մնացել,
Ինչ անես, ա՛պի, դժվար ե հանել։
«Ա՛նհոդ կաց, վորդի՛, ինչ վերք ել լինի,
Աղջիկս նրան դեղ ու ճար կանի։
Նա սովորել ե հանդուցյալ մորից,
Վոր բժշկում եր գնդակ ու սրից։
Ալ-վարդ ջան, ա՛ղջի, ճար ունես, դե՛, տես։
Ջահել ե, մեղք ե, կռնատ չթողնես»։
Ցեվ Ալ-վարդն յեկավ դեղի փաթեթով,
Գնդակը հանեց մի յերկար կարթով,
Վերքը նա լվաց, դեղը փաթաթեց,
Վրան մետաքսի թաշկինակ կապեց։
Իսկ հյուրն Ալ-վարդով այնքա՞ն հիացավ,
Վոր գնդակ ու ցավ իսպառ մոռացավ։

«Դե՛, պատմի՛ր, վորդի՛, գլխիդ անցածը,
Թե վորտեղ հասավ քեզ եղ արկածը»։
— Ա՛յ, ա՛պի՛, լսի՛ր, սրտիս գաղտնիքը,
Վո՛չինչ չեմ ծածկիլ, կպատմեմ անվախ.—
Ցեվ հյուրն արբյունով աչքերը լիքը
Դեռ վագրի նման նետեց աջ ու ձախ.
— Բայց առաջ բախչի՛ ինձ, Ավագ-
վորսկան,
Վոր ինձնից ճարպիկ գողեր ել չկան.
Իսկ թե քեզ մոտ ել դուրս գամ մեղավոր,
Ինձ համար յեղի՛ր դու խիստ դատավոր։
«Իզուր ես յեկել, մտել իմ տունը,
Ինձ մոտ չես գտնիլ քո փրկությունը.
Հոգիս ել կտամ յես իմ ղոնաղին,
Բայց չեմ խնայիլ, պաշտպանիլ գողին։
Գիշերս կտամ յես քեզ ապաստան,
Կգարթնես քնից, կերթաս ապահով,
Հետո կվնտրեմ յես ինչպես վորսկան
Ցեվ կանեմ մի որ քեզ գնդախորով։
Դե՛, պատմի՛ր, տեսնեմ, եղ ինչ ահարկու՝
Սարերը ընկած ավազակ ես դու»։
— Գարուն եր, ա՛պի. սարը քոչելիս
Մի քանի հարուստ թուրք աղալարներ՝
Աղբյուրի ափին նամազ անելիս,
Որյուկել եյին իրանց ձիաներ։
Ցերը յես անտառից հանկարծ դուրս յեկա,
Նրանց միամիտ բարով տվեցի,
Նրանք ծաղրեցին և հրահրելով
Հարցրին ինձ.—Ե՛յ, ձո՞ւ գողացար, թե ձի։
Են որից թեև տարիներ անցան,
Բայց նրանց ծաղրը մնաց իմ սրտում,
Ցեվ յես յերդվեցի են ծաղրի թունով
Լինել ավազակ գող և մարդասպան,
Գիշերը անցնել բեգերի բլինով
Ցեվ մահ գոռալով, քշել ամեն բան։
Հենց ե՛ն ինձ ծաղրող մեծ աղալարին
Գիշեր ու ցերեկ փնտրելով արթուն,
Վերջը յես գտա Ղարախաչ սարին,
Ուր նա հայտնի յե ինչպես մեծատուն։
Ասլան-բեգն ե նա, քաջ և անվանի,
Տավար-վոչխարի հոտերով հարուստ,
Բայց ամենից լավ մի սև ձի ունի,
Վոր աշխարհ արժի մենակ արտաքուստ.
Չի հասնիլ նրան հին հեքյաթների
Թեկուզ հրեղեն ձին իր թևերով,
Չի հասնիլ նրան և գնդակների
Կարմիր ժժոցը մռայլ գիշերով.
Առաջուց գիտե նա՝ թե փորձանքը
Ցե՛վ թե հեծվորի սրտի բաղձանքը։
Մթին գիշեր եր, հենց գողի գիշեր,
Ցերը Ասլան-բեգի որին մոտեցա.
Հենց վոր որյուկը բհրից կտրեցի,
Վեր կացավ հանկարծ մի շուն դոլանից,
Ցերկաթի վոտկան ել վոր կոտրեցի,
Դղրդաց որեն հարայի ձենից.
Մարդիկ վազում են, շները հաչում,

Բայց յես փորբսող գետնին եմ կպչում,
Ցեվ հարահրոցի թունդ տրաքտրաքոցին
Թռչում եմ, սանձում վոտկապով սև ձին։
Նորից դղրդաց, գնդակ վորոտաց.
«Տարան հա՛, տարա՛ն բեդի սևուկը»։
Բայց յես նեռի պես ականջը մտած
Բշում եմ նրանց գոված նժույգը.
Տրա՛ք, հա՛, տրա՛ք գնդակներ թռան.
Խառնվելով որեն, գոռում եր. «տար՛ան,
Հասե՛ք, հա՛, հասե՛ք դալի երմանին,
Կենդանի թաղեց իգիթ Ասլանին»։
Խրխնջում եր ձին, վոտկապը կրծում,
Փրփուրն ամպի պես ռնգներից գցում
Ցեվ կրակ կտրած ենպես եր վազում,
Վոր կասես հեռվից գնդակ եր բըզզում։
Թե վոր յես նրան հեծած չլնեյի,
Ով գիտեր, թե վողջ եստեղ հասնեյի»...
Հանկարծ զրույցը Կարոն կտրելով,
Դիմեց վորսկանին, այսպես խնդրելով.
—Հերիք ե, ա՛պի, յես լույսն եմ ընկնում,
Տավար ու վոչխար արոտ են գնում.
Թե նամարդ եմ յես, զարկի՛ր գնդակով,
Թե չե, ճամփա տո՛ւր ինձ քո որհնանքով։
«Համբերի՛ր, Կարո՛, համբերիր մի քիչ,
Մի որ ել կլնես թուլերի փրկիչ.
Ես գիշեր պատմած գլխիդ անցքերը
Մոռցրին ծերիս ճերմակ հերքերը.
Թե գող լինեյիր շատի պես անմիտ,
Ցես չեյի ասիլ քեզ յերբեք իգիթ.
Բայց յերբ վոր գող ես մենակ թասիբից,
Նամարդ բեգերին պատժելու համար,
Ոգնություն կգա քեզ ամեն սուրբից
Ցեվ դու կլինես անհաղթ զորավար.
Մարդը նամարդին թե մյոհտաջ կանես,
Ավազակ-վորսկանից պատիժ կառնես.
Դե՛, տուր խանչալդ, որհնեմ իմ սրով,
Վոր քեզ տեսնելիս գոդա թշնամիդ,
Քեզ պես թասիբի ավազակներով
Լցվեն մեր յերկրի սար, դաշտ ու հովիտ»։
Ծերը պատյանից դաշույնը հանեց
Ցեվ, խաչ քաշելով Կարոյի սրին,
Պապական ծիսով նա քաջին որհնեց.
Ապա որյուկից նրա ձին բերին.
Ցեվ Կարոն թռավ առույգ վոստյունով,
Կպավ մերկանդամ սևուկի մեջքին.
Խրխնջաց սև ձին ու փռնչյունով
Թռչկոտաց հուժկու հեծվորի տակին։
Ցեվ սիրտն ու հոգին թողած Ալ-վարդին,
Նա մնաս բարով ասաց Ավազին։

7

Ծեգում է արդեն, բայց Կարոն չկար՝
Ալ-վարդը գնաց՝ ինչպես խելագար՝
Ալաչուխ մտավ, սափորը ուսեց,
Ցերգի մրմունջով աղբյուրը վազեց։

Ձիու հետքերը հանկարծ նա գտավ,
Այնտեղից պոկեց մի փունջ կանաչ խոտ
Ցեվ համբուրելով նրա մեջ դրավ
Կարոյի թողած զնդակը արնոտ։
Բայց խոր ձորերում կամաց մարելով,
Դեռ զրնգում էր պայտերի դոփյուն,
Նրան յերբեմն արձագանք տալով,
Զուլվում էր յերգի անուշիկ հնչյուն.
Ալ-վարդն ել հենված դեռ ժայռին գաղտնի՝
Կարծես ուզում էր յերգողին գտնի։
Բայց յերգ ու դոփյուն խառնվելով իրար,
Հեռալով անցան անտառից անտառ.
Իսկ թեւից հանած զնդակը ծոցում
Այրում է նրան, վորպես հնոցում.
Վիրավոր հյուրի պատկերն ել սրտում
Սափորը ուսին յերգում է տրտում.—
— Մեր տուն յեկող ձիավոր,
Արծվի պես վիրավոր,
Եղ ո՞ւր թռար դու շուտով
Սև ձին նստած յափնջով։
Ա՛խ, ո՞ւր թռավ են տղեն.
Սիրաս հանեց նա տեղեն։
Ա՛խ, հեռացար դու աչքես,
Ձես հեռանում վառ մտքես.
Դեռ տեսնում եմ նստած ձին՝
Վրեդ քաշած յափնջին։
Ա՛խ, ո՞ւր թռավ են տղեն,
Սիրաս հանեց նա տեղեն։

Ամպ ու հեղեղ, մութ գիշեր,
Լալվար սարի սև փեշեր,
Դո՛ւք են տղին զրահով
Պահպանեցեք ապահով։
Ա՛խ, ո՞ւր թռավ են տղեն.
Սիրաս հանեց նա տեղեն։

8

Որվա հոգսերից հոգնած արևը
Ննջում է հանգիստ սարի քամակին.
Ամպերի նման սարի վերևը
Բինեքի ծուխն է փարվում ահագին։
Սարեր ու ձորեր լուռ են հոտերով,
Աղբյուր ու ծաղիկ արթուն տենչերով
Դալար սարերի կենսատու ոգում
Ցերազների մեջ սեր են թրպրտում։
Ավագ-վորսկանը, հայրը Ալ-վարդի,
Ձիրուխը բերնին դեռ նստած արթուն՝
Հիշում է մտքում կյանքը վորսորդի,
Դիտելով ծուխը գիշերը արթուն.
Ցեվ արյունաներկ ծեր հիշողության
Ամեն մի մոռցած, կորած անկյունում
Սև ծխի մռայլ ամպերի նման
Անցած որերն են մեկ-մեկ բարձրանում.
Իսկ ալաչուխում պառկած առանձին
Գլուխը բարձին այրվում է Ալ-վարդ.
Քնի մեջ կարծես թռել է հոգին

Մի աշխարհ՝ անվերջ անուշ ու անդարդ։
Մարել են ճրագի կայծերը աղոտ
Ննջում է ամբողջ օրեն մրափած։
Հանկարծ հեռվում թնդաց մի վորոտ,
Որ քնից խսկույն Ալ-վարդը զարթած՝
Աչքերը հառեց ծերունու դեմքին
Ցեվ պատմեց հուզված մի յերազ մթին։
«Ինած եյի յես, տեսա յերազում
Մի սիրուն պախրա անտառից վազեց,
Մեր կովերի հետ կանգնած արխաջում՝
Աղաքարերից միքիչ աղ լիզեց։
Նա պոզեր ուներ մեկ-մեկի վրան
Անտառում բուած ծառերի նման։
Ինչպես մի ընկեր կարոտած սիրով,
Ցեկավ վաթաթվեց, փարվեց իմ շորով։
Բայց մեկ ել տեսա ապիս բարկացած,
Հրացանը լցրեց, դարձավ դեպի մեզ։
Ցես ել վեր թռա տեղից վախեցած,
Կանչեցի նրան, խնդրելով եսպես։
Մ՛պի ջան, ա՛պի, մի՛ սպանիր պախրան
Թո՛ղ բռնել եմ յես, վոր պահեմ նրան։
Ապիս չլսեց։ խեղճ պախրան ընկավ,
Կասես թե գնդակն իմ սրտովն անցավ»։
Վերջն այսպես խոսեց խոր հորանջելով,
Հարևան բինի մի պառավ կնիկ,
Վոր թափանցել եր դարի դցելով,
Մեծ յերազների խորհուրդ ու դաղտնիք։
— Ցերազն է անվերջ մի սիրուն աշխարհ,

Ուր միշտ ապրելով ինչպես վոգիներ,
Կարոտ սրտերը դանում են իրար։
Շնչում են անուշ, թափում արցունքներ։
Լսում եմ, Ա՛լ-վարդ, սրտիդ տրոփից՝
Դու դեռ դողում ես մահվան սարսափից։
Ո՞վ է բաժանել կյանքը յերկուսի,
Ո՞վ է խանգարել հանգիստը կույսի։
Գնդակ ու պախրա, լացը կուսական,
Խաղեր չեն յեղել անհոգ մանկական,
Այլ մարմնից ազատ յերազի վոգին
Գուշակել է քո մոայլ ապագան։
Ցե՛վ տանջանք է նա պատրաստում կրծքին,
Ցեվ խոստանում, թե լավ որեր կգան։
Կաղատվես, Ալ-Վարդ, դու չար վորձանքից։
Թե պախրա չընկնի հորդ գնդակից»։
Ցեվ Ալ-վարդն այնպես պառավից լսեց,
Վոր այն յերազից ցավ չկա իրան։
Ցերազահանն ել ծերին համոզեց,
Վոր այնուհետև վորս չանի պախրան։

9

Խոր ձորի միջին մի ժայռի կրծքից
Աղբյուր է բղխում ուրախ քչքչան։
Նրա ձայները անուշ բյուր յերգից՝
Սարեցու համար վաղուց սրբացան։
Սիրո-աղբյուր է նա հնուց ասվել,
Սիրուն կույսեր են միշտ նրան ուխտել։

Ցեվ դուշակել ե ջրի յելեվեջ,
Թե ով յերջանիկ կլնի սիրո մեջ։
Դարերից ի վեր աղբյուրը հոսում,
Դեռ սիրո մասին յերգեր ե հյուսում,
Ցեվ գլգլալով ձմեռ ու ամառ,
Դեռ նա յերգում ե սիրելու համար։
Գնում ե Ալ-վարդ դեպ Սիրո-աղբյուր՝
Իրանց տան համար տանելու պաղ ջուր։
Հասնելով ձորը մի նեղ կածանով,
Դեռ ծաղիկներ ե նա չարում կրծքին
Ցեվ գյուլումներից մեղմ անուշ ձայնով
Ցերգում ե Սիրո-աղբյուրի ափին.
Սարերն ել նրան ուրախ քրքիջով
Արձագանք տվին ժայռերի միջով.—
«Աղբյուր, ա՛ղբյուր, ջա՛ն աղբյուր,
Ջուրդ գլգլան. աղբյուր,
Վարդը բացվում ե բույրով,
Սերն ապրում ե համբույրով.
Թե վոր գտնես իմ յարին,
Մոմ կվառեմ քո քարին»։
— Ա՛լ-վարդ, Ալ-վարդ, ջա՛ն Ալ-վարդ,
Բյուլբյուլն երվում ե անվարդ.
Հեռվից տանջված քո սիրով՝
Դեռ կռվում են հուր-սրով.
Բայց ամենից՝ աշխարհում
Քաջ Կարոն ե քեզ սիրում։
«Ա՛ղբյուր, ա՛ղբյուր, ջա՛ն աղբյուր,
Ջուրդ գլգլան ա՛ղբյուր,

Վա՛յ թե ապես իմանա
Ու մեզ վրա բարկանա՞.
Ցեթե Կարոն ինձ տանի,
Վա՛յ թե նրան սպանի՞»։
— Ալ-վարդ, Ա՛լ-վարդ, ջա՛ն Ալ-վարդ,
Բյուլբյուլն երվում ե անվարդ.
Թե վոր մեռնեք յերկուսով
Աշխարհի մեջ նամուսով,
Սիրո շեմքում ձեր ճրագ
Վառ կմնա անկրակ։

10

Սև ամպի նման սև ձիավորը
Սարից աղբյուրն ե թափ առած քշում.
Վեր թռավ հանկարծ կույս ուխտավորը,
Վազում ե բինեն սիրո մշուշում։
Աղբյուրի ափին Լալվարի կույսին
Կարոն սիրել ե սափորը ուսին.
Թեկուզ և զարկեն դնդակ մահացու,
Կարոն ընտրել ե նրան հարսնացու։
Զարթնելով սերը յերկու սրտերում,
Աղբրի ափերն են միշտ նրանց քաշում.
Փնտրելով միմյանց դալար ափերում,
Սիրո յերգերով սրտերն են մաշում։
«Լալվարա բարձր սարից
Շատ սիրուն ե աշխարհը.
Ամպի տակի աղբյուրից

Զուր է տանում իմ յարը։
Աղբյուր, ծաղիկն ու լալը[1]
Շատ առատ են Լալվարին.
Բայց իմ սիրած մարալը
Արժի արար-աշխարհին։
Սարի շուշան մատերով
Հանեց նա իմ գնդակը,
Սարի նախշուն աչերով
Անցավ սրտիս հատակը։
Ա՛խ, են աղջիկն աչք-ունքով
Զարկեց ինձ նոր գնդակով.
Զուր է թռչում իմ սև ձին—
Սիրտս կպավ Ալ-վարդին»։
—Ո՞ւր ես թռչում, ձիավոր,
Զորերն ի՛վեր վիրավոր.
Քո գնդակը վառ բոցում
Չե՞ վոր մնաց իմ ծոցում։
Ա՛խ, հեռացար մեր բինից,
Ինձ զրկեցիր դու քնից.
Ցե՛տ արի՛, յե՛տ, բինեքով,
Ամպի նման քուլեքով։
Ցե՛տ արի՛, յե՛տ, ձիավոր,
Մութ գիշեր է ահավոր.
Թռի՛ր սարի քամակով
Կայծակի պես փայլակով։
Դե՛, թը՛ռ, արի՛, ձիավոր,

1 Գոհար։

Արժվի պես թևավոր.
Ցե՛տ, արի՛, յե՛տ Լալվարը,
Մենակ մնաց մարալը։

ՅԵՐՐՈՐԴ ՅԵՐԳ

1

Ուր սուր ծերպերով ահեղ ցիր ու ցան
Լեռներն են բազմած բնության արքան,
Ուր մութ ամպեր են գունդագունդ զինվում,
Փայլակ-կայծակով իրար հետ կռվում՝
Զարնելով միմյանց յերկիր ու յերթեր,
Թռչկոտում են հուր կայծակի շանթեր,
Խաղում են, գոռում ճայթյուն վորոտով,
Ծեծում լեռներին, ծաղրում կարկուտով—
Այնտեղ գիշերվա խավարի մեջին
Մի խարույկ վառվեց Լալվարի լանջին.
Զորերի քաջեր վորսի յեն յեկել,
Կրակի շուրջը կարգով նստոտել.
Վոմանք շակում են շողշողուն զենքեր,
Կարմիր բոցերից փայլում են դեմքեր,
Վոմանք խորոված յեղնիկ կամ վարազ
Ցերկար ճոզերով չեղջի վրա շարած,
Ցեվ լուռ նստոտած յաղնջի տակին՝
Շարունակ լարված լսում են մեկին։
Ինչպես խոր ձորում գնդակ ու վառոդ՝
Թնդում է մեկի ձայնը կրակոտ,

Այնպես ե գլխի անցածը պատմում,
Կարծես Լալվարին ամպ ե վորոտում.—
«Անցնելով հազար արյուն-փորձանքից,
Մահվան հետ ընկեր—ախպեր եմ դառել,
Նամարդ չի պրծել դեռ իմ գնդակից,
Գլխես մազի չափ վորսեր եմ արել.
Դեռ ուժ ունեմ յես վագրից առավել,
Գնդակս ել վորսից խսկի չի շեղվել.
Բայց աղջիկս արդեն տեսավ յերազում,
Վոր վորս անելը ել ինձ չի սազում.
Ցես ել ուխտում եմ արյուն չթափեմ,
Այլ ջահելներիդ համար աղոթեմ,
Վոր դուք ել գնաք իմ թողած հետքով,
Պահեք ավանդը մեր հին պապական,
Մեկն իր կատարած արժանի գործքով
Իմ տեղը լինի նո՛ր Ավագ-վորսկան»:
Զարմացած ծերի վերջին խոսքերով,
Տղերքը դարձան նրան հարցնելով.
— Քեզնից ձորերում՝ դող ու մարդասպան
Դողում են մարդիկ, հարամի, գազան.
Ով վոր գնդակիդ ձենը լսում ե,
«Ավագ-վորսկանն ե ելի», ասում ե.
Թեկուզ դու լինես հարյուր տարեկան,
Ո՞վ կարա լինել քեզ նման վորսկան:
«Մի չարաթ ել կա դեռ Վարդավառին,
Վոր սար ու ձորից ուխտ գան Լալվարին.
Ցերը վոր են որը գան ծեր, պատանի,
Թող ով վոր քաջ ե նամուսը տանի:

Մինչև վոր անցնեն ես չորս-հինգ որը,
Տակն ու վրա արեք դուք սարն ու ձորը.
Ո՛վ վոր մեծ վորսով կգա Սուրբ-Սարգիս,
Նա յել կլինի ժառանգն Ավագիս»:

2

Ցերը գիշերը անց, հենց լուսադեմին,
Խոսքը վերջացրեց Ավագ ծերունին,
Տղերքը մեծ-մեծ վորսերի հուսով
Պարկ ու հրացան գցեցին ուսով,
Վո՛րը սարերին, վո՛րը ձորերում
Հրացանը ձեռին վորս ե վորոնում:
Մի տեղ յեղնիկն ե անմեղ բառաչում,
Մի տեղ պախրան ե հանկարծ հառաչում,
Մի տեղ ել արջին վորջից հանելով,
Կռվում ե մեկը իր սուր խանչալով:
Գազանը տալով վորսորդին ապտակ,
Դեռ պաշտպանվում ե նրա սրի տակ.
Վայրի վարազը ժանիքը սրած՝
Մացառն ե նետվել ոտքը փրփրած.
Նորից գնդակ են հրացանը լցնում,
Նորից վազելով յետևից հասնում.
Ցեվ վորս ու վորսկան սյուրադ[1] ընկնելով,

[1] Արշավ:

Խեղդում են շատին չան վոհմակներով։
Վոմանք եկ Լոքում լիճկապ են անում
Ցեվ փախածներից նորից կոտորում։

3

Ամեն տեղ գնդակ, կրակ, վորոտում,
Բայց ինչի՞ Կարոն վորս չի պատրաստում.
Նա թափառելով հրացանը ձեռին,
Դեռ նոր եր գտել մի հարմար դարան
Ցեվ մտածելով իր վորսի մասին,
Լուռ զանգատվում եր բախտից ինքն իրան.
«Ցես եկ եմ ուզում գնալ Սուրբ-Սարգիս,
Ցես եկ եմ ուզում տեսնել Ալ-վարդիս.
Բայց ինչ արած վոր դեռ նրա բախտից
Վորս չդուրս յեկավ վորսառատ հանդից.
Երնե՞կ անմուրազ ես ձորում մնամ,
Քան թե յես դատարկ Լալվարը գնամ.
Մեն-մենակ յե՛ս եմ
Սարերին թշվառ.
Վո՛չ բինա ունեմ,
Վո՛չ եկ յուրդ, Լալվա՛ր։
Դաշտին թե սարին
Քուն չունեմ, Լալվա՛ր.
Կարոտած յարից
Լուր չունեմ, Լալվա՛ր։
Վորս՝ կուզեմ, Լալվա՛ր,

Վոր տանեմ յարիս.
Վորս կուզեմ, Լալվա՛ր,
Ճար արա՛ դարդիս։

4

Ուր առվակները մանուկ կարկաչով
Դիմում են ձորեր, լցնում հառաչով,
Ժայռերից ժայռեր թափ առած ուժով
Թնդյուն վորոտով փրփրում ե ջրվեժ,
Մառուքը կիտած հին ապառաժով
Զարդվելով անհույս, յերդում ե վրե՛ժ.
Ուր զեփյուռ մեղմիկ ցրվելով բույրը,
Սուզում ե սիրտը վայելքի ծովում,
Իսկ թարմ շուրթերի կույսի համբույրը
Ծաղիկների հետ անմեղ բարևում.
Ուր զգացումն ե բռնկում հուժկու,
Աղավնուցը հեզ, արծվից ահարկու,
Վորսի հրաթափ գնդակի թռիչ,
Ջրվեժի վայրի յերդը ձորերում,
Ամեն մի հնչյուն անուշիկ, թովիչ
Անցնում ե սիրտը, նրանով փարվում,—
Այն կամարի տակ անսահման կապույտ
Լալվարն ե զարթնում հարսի պես անվույթ։
Գուգարքի հսկան բարձր յեթերից,
Գլուխը հաղիվ հանած ամպերից՝
Ծպտում ե, խնդում փոքր լեռներով,
Վորպես ծերունին իրա թոռներով։

Այսոր նա ժպիտն անուշ ճակատին՝
Ամպ-յերեսկալը գցած յերկնքով,
Զուգվում է ուրախ Սուրբ-Սարգսի ուխտին
Գուգարք աշխարհի զարդ ու պճրանքով.
Իսկ նրա բարձր դալար դաղաթին
Անչուք քարակույտն առանց տանիքի,
Հին սուրբ խաչքարը բազմած քարափին
Գրավում է սիրտը ուխտավոր բինեքի.
Սար, դաշտ ու հովիտ անթիվ ցիր ու ցան,
Փրփրուն գետեր, դալար անտառներ
Մի նվիրական նեղ, մոլոր կածան
Այնտեղ է տանում բոլոր բինաներ:

5

Ասում են՝ ով վոր միշտ վառ հավատով
Գալիս է Լալվար վորևէ ուխտով,
Խնդրում, աղերսում քաջ Սուրբ-Սարգսին,
Հասնում է անչուշտ սրտի մուրազին.
Ցեվ թե մարդ, թե սար, թե ժայռ, թե բլուր,
Հաղթված գլխներով խոնարհվելով լուռ.
Գալիս են նրա զորության ծառա,
Վորպեսզի հասած ցավը վերանա:
Վոմանք հասնելով քրտինքն յերեսին,
Հանգստանում են Լալվարի ուսին,
Վոմանք ել հեռվից յերկար շարքերով
Աչքերը հառած դեպի սուրբ սարը՝
Գալիս են բարձված հազար մեղքերով,

Վորպեսզի դանեն փրկության ճարը:
Արդեն ջերմեռանդ ծեր, պատանի, կին
Հազար գունավոր զգեստներ հագին,
Մատուռի շուրջը խունկ ու մոմերով
Պատույտ են գալիս բոբիկ վոտներով:
Բերել են այնտեղ և՛ հիվանդներին,
Ցե՛վ խաչ-փաթաթուկ[1] թույլ ընկածներին.
Վո՛ր մի ցավից, կամ չոռից տկար՝
Ընկել է կծկված սուրբի վոտները.
Վորն ել ուշաթափ, մորուց ցավագար
Իրար է գարկում պինդ ատամները,
Բերանը փրփրած տանջվում չարաչար,
Քաջ զորավարից աղերսում մի ճար.
Ցեվ մուրազներով՝ թշվառ, բախտավոր,
Մոմեր են վառում սուրբ խորհրդավոր:
Մի տեղ ուխտավորը նստում է ճաշի,
Մի տեղ դնում են կոխին[2] թամաշի,
Մի տեղ խնձորը նշան են խփում,
Մի տեղ մատաղը դեռ նոր են յեփում,
Մի տեղ աշուղը լի սուփրի ծերին
Բազմած, խփում է սազի սիմերին.
Մերթ իգիթների գործերն է գովում,
Մերթ նամարդների սիրտը նզովում.
Մի տեղ նաղարան զլում է պարին,
Զուռնա-բայաթին կանչում է յարին.

[1] Խաչի պատված անդամալուծներին:
[2] Գոռեմաքա

Մեկը տեսնում է իր նշանածին,
Մեկը նշանում մտքում սիրածին.
Մի տեղ էլ անմեղ կուսական սրտեր,
Զգալով սիրո առաջին շանթեր,
Զեռք-ձեռքի տված յերդում են, պարում,
Ամենքի դեմքին ժպիտ է փայլում
—Զինարի պես բոյ ունես,
Սարի ծաղկի հոտ ունես.
Ափսո՛ս քեզ, վոր տխուր ես—
Անուշ յարից լուր չունես:
— Ես սարերին ուխտել եմ,
Վոր միշտ մատաղ յես կանեմ.
Թե գա յարս մեծ վորսով,
Սերս նրան բաց կանեմ:
Ավագ-վորսկանը սարին
Եսոր հանդես բաց կանի,
Ա՛խ, յերանի են յարին՝
Ավագուիթյանն արժանի:

6

Իսկ այնտեղ խմբով անվանի քաջեր
Զենք ու զրահը դցած ուսերով՝
Բերել են յեղնիկ, յեղջերու, արջեր
Ցեվ պարծենում են իրենց վորսերով:
Բայց հանկարծ լսվեց կանացի հառաչ.
Մի խումբ աղջիկներ վազեցին առաջ
Ցեվ հեկեկալով, հայտնեցին ծերին.

—Սիրուն Ալ-վարդին բեգերը
փախցրին...
Զորս-հինգ ձիավոր զինված հրացանով՝
Անցնում եյին լուռ մոլոր կածանով.
Հենց վոր մեզ տեսան, նրանք կանգնեցին,
Իրար հայտնելով առաջ վազեցին.
«Մի տե՛ս, են սիրուն, լեյլի աղջկան,
Նրա պես հյուրիք յերկնքում չկան.
Դալի-երմանու զողցած սևուկն էլ,
Աբար աշխարհն էլ մտքես հանեց նա:
Դե՛, տեսնեմ, տղե՛ք, ով կարա բռնել.
Նրան փախցնողը ջաննաթ կգնա»:
Ցեվ նրանք տարան սիրուն Ալ-վարդին,
Կորած ձիու տեղ կապեցին թարքին.
Մենք լսում եյինք դեռ նրա հարան.
«Ա՛պի ջան, ա՛պի», կանչում եր՝
«տաարա՛ն»:

7

Ծերունին կանգնած քարափի գլխին՝
Զայրացած ուժգին դարձավ ամբոխին.
«Հե՛յ, տղե՛ք, սև սուդ պահեցեք,
Դատ ու զուռնայի ձենն էլ կտրեցե՛ք.
Տեսնում եմ, վոր դուք շատ ուժ եք թափել
Ցեվ գազանների մեծ վորսեր բերել.
Բայց վոչ վոք չիլնիլ դեռ Ավագ-վորսկան,
Մինչև չաղատի գերի աղջկան.

Վա՜յ, թե բեգերն էլ անպատվեն նրան,
Ամոթ, նախատինք կմնա հավիտյան»...
Եվ ժպիտ չմնաց վո՛չ մեկի դեմքին,
Վիշտն ու վրեժը տիրեց ամենքին.
Լռեց և՛ քեֆը, և՛ ամեն շչունչ,
Մարեց արձագանք ձորերում լուռ-մունջ:
Դեռ ժայռից նոր եր իջել ծերունին,
Մի տրաքոց լսվեց կաղնուտի ձորում:
«Դե՛, հասե՛ք, տղե՛ք, հասե՛ք են ձենին,
Կռիվ է ենտեղ, մարդիկ են գոռում»:
Ուխտավորը մոռցած հանդիսի որը,
Շեշտակի վազեց կաղնուտի ձորը:
Յեվ տեսավ այնտեղ աղբյուրի փոսում
Ընկած բեգերից արյուն է հոսում:
Կարոն Ալ-վարդի դեմ կանգնած արի՝
Յերդում է վորսած աչերը յարի.
«Ալ-վարդ, Ալ-վարդ սև աչերից
Յես ընկել եմ սար ու ձոր
Ալ-վարդ, Ալ-վարդ, սև աչերից
Դադար չունեմ վո՛չ մի որ:
Քեզ տեսնելով, կռիվ ու ջարդ,
Զար մաքերս ցրվեցան.
Նրանց տեղը, սիրուն Ալ-վարդ,
Դու յես կապել ծիածան:
Են որվանից սիրտս էլ է
Անուշ, բուրում, կանաչում.
Են որվանից սիրտս էլ է
Արնածարավ քեզ կանչում:

Ա՛ռ զենքերս դու մեկ-մեկ,
Յես հաղթված եմ քո սիրով.
Ա՛ռ զենքերս, վոր յերբեք
Յես չեմ տվել խիստ կռվով:
Ա՛լ-վարդ, Ալ-վարդ, սև աչերից
Յես ընկել եմ սար ու ձոր.
Ա՛լ-վարդ, Ա՛լ-վարդ, սև աչերից
Յես հալվում եմ որեց որ»:

8

Հետո ուխտավորի հետ նա մի բասին
Գնաց պատմելով բեգերի մասին.
«Հրացանս լցրած յերկու գնդակով՝
Յես նստած եյի կաղնուքու կողքին.
Մեկ էլ ի՞նչ տեսնեմ, գալիս են շարքով
Զորս-հինգ ձիավոր մի աղջիկ թարքին:
Տեսա, վոր մեկը ճանաչս է գալիս,
Ասլան-բեգին եր նմանը տալիս.
Աղջիկն էլ ասի, թե խեղճ է թշվառ,
Տե՛ս, թե ի՞նչ վորսով յետ կերթամ Լալվար.
Հանկարծ լսեցի՝ «վա՛յ, տանում են,
վա՛յ»...:
Տեսա, վոր կապածն աղջիկ է և հայ.
Մի գնդակ թողի հենց ծառի կողքից,
Ասլան-բեգն ընկա՛վ իր ձիու մեջքից.
Յես նորից լցրի և նորից ընկան,

Մի մարդ ու մի ձի հաղիվ թե պրծան.
Ալ-վարդն ել յեղավ իմ վորսը անգին
Ահա բերել եմ, վոր տամ Ավագին»:

9

Ուխտավորը խառնվեց, փնտրում է նրան,
Ուզում է տեսնել, ո՛վ է քաջ տղան:
Ծերը դաշույնը հանեց իր գոտկից,
Տվեց Կարոյին ամբոխի դիմաց
Ցեվ համբուրելով նրա ճակատից,
Դողդողջուն ձայնով որհնելով, ասաց.
«Ապրիս դու, Կա՛րո, յերկար տարիներ,
Վոր միշտ ազատես անմեղ գերիներ.
Լալվարն ել լինի թո՛ղ խոսքիս վկան,
Վոր քեզ որհնում եմ յես Ավագ-վորսկան»:
Նորից նույն զուռնան-նաղարան հնչեց
Ցեվ քաջ Կարոյին կյանք և ուժ մաղթեց.
Ուխտավորն ել վերջին ջերմ համբույրներով
Իջավ Սուրբ Սարգսից նեղ կածաններով.
Ցեվ պար ու յերգով Լալվարից նա ցած
Գնաց իր սրտի մուրազը առած.
Կույր աչուղներն ել յերգ հորինեցին
Ցեվ նոր իգիթին գովաբանեցին:
— Կարոն է զարկել
Բեգերից մեծի՛ն,
Կարոն է փրկել
Սիրուն Ալ-վարդին:

Թույլերի պաշտպան
Զկա նմանը.
Որհնել է նրան
Ավագ-վորսկանը:
Թնդում են լեռները
Ցերգերով գովքի—
Կարոն է, Կարո՛ն
Արժանն Ավագի...

ՉՈՐՐՈՐԴ ՑԵՐԳ

1

Աչունն ել յեկավ Գուգարք աշխարհում
Սարին ու դաշտին այլ կյանք է յեռում.
Խուզելով գառան, վոչխարի բուրդը,
Քոչել է բինեն թողնելով յուրդը.
Լեռներից զվարթ դիրացած հոտեր
Ձմեռվան համար իջել են դաշտեր.
Ցուրդերը դատարկ սևին են տալիս,
Աղբյուր ու ծաղիկ վողբում են, լալիս.
Մենակ խաղում է, թռչկոտում պախրան,
Սարեր ու ձորեր մնացին նրան.
Արծիվն ել տխուր նստած ժայռերին՝
Վորսեր է փնտրում իր սոված փորին:

2

Դաշտերում հոգնած խեղճ ու նաչարին
Լավ հաց ու գինով պարգևեց տարին.

Ցեվ մի համբույրով գթոտ հայրական,
Ավագ-վորսկանը որհնեց աղջկան։

4

Հանկարծ խեղճ կույսը գլուխը թեքեց,
Դեմքը այլայլվեց, նա դողաց լուրից,
Ցեվ մատաղ կուրծքը նետի պես շանթեց
Այն ավետիքը, վոր լսեց հորից։
Նա ճնշված զաղտնի ներքին հուզումով,
Զյունի պես ճերմակ ձեռքերը կրծքին,
Դեռ սպասում եր նախազգացումով,
Ինչպես անմեղ զոհ ծերունու կողքին։
Թեև արցունքը նա չուտ կուլ տալով,
Սիրո կռիվը ծածկեց իր հորից,
Բայց սիրտն ասում եր ուժգին տրոփալով՝
«Մարդու չեմ գնալ բացի Կարոյից»։
Ցեվ դեռ հայտնի չեր վորսականին սերը,
Վորով այրվում են յերկու սրտերը.
Բայց ո՞վ կիմանա՝ սե՞րը կհաղթի,
Թե, նվիրական խոստումն իգիթի։

5

Քանի գիշեր է, մինչև լուսադեմ
Ծեր, յերիտասարդ, այր, կին ժպտադեմ
Հաղար գունավոր զգեստներ հագին՝
Խնդում են բարձր Դեպետի ափին.

Հանդես է այնտեղ մեծ հարսանիքք,
Զուռնան զլել է վաղուց սահարին[1]։
Թնդում է հանկարծ ձայնը Ավագի,
Հոսում է սպիտակ ու կարմիր գինին.
Վորսկանը՝ առատ վայրի երեներ,
Ցերինջ, վոչխար է հարսնիքին մորթել.
Ցեռում են չորսկանթ խոշոր կաթսաներ,
Կրակի ծուխը յերկինք է պատել։
Մի տեղ ամբոխը խմբով նստոտած՝
Անուշ է անում, հարսանիքն որհնում,
Իսկ աշուղները, մրցելով հարբած,
Ալ-վարդի համար յերգ են հորինում.
Մի տեղ սահելով, հարսն ու աղջիկներ,
Կազմում են ուրախ շրջապարի շարք,
Մի տեղ ձողերին վառած պատրույգներ
Ցերեխայք գոռում, վազում են անկարգ.
Հերթիկների տակ և արձակ բակում
Թնդում են հազար աղմուկ ու յերգեր.
Փրփրած գինու թասերը ձեռքում՝
Ուտում են քաշկյան[2], խորոված, մրգեր։
Այսոր խնճույք է, մյուս որն էլ հանդես,
Ցոթ որ, յոթ գիշեր կտևի այսպես.
Գյուղի աղքատը, ծերն ու պատանին
Ցոթ որ, յոթ գիշեր հյուր են վորսկանին։

---

[1] Առավոտյան յերգի յեղանակ։

[2] Թոնրի մեջ մսից և ձավարից պատրաստած հարիսի նման կերակուր. կորկոտ։

6

Հանկարծ Ավազի Ջիրիդը ճռճաց,
«Ջիրիդ է՛, Ջիրի՛դ», ամբոխը ճչաց.
Դհոլը դմբաց, հեծվորներն անցան,
Կազմեցին միմյանց հակառակ շրջան:
Զինված ձողերի սուր նիզակներով
Հենց բաժանվեցն յերկու բանակի՝
Բարձրացրեց փոշին ձին սմբակներով,
Գլուխներ պատռեց զարկը նիզակի,
Ցեռում է հանդեսն ահեղ Ջիրիդի,
Հասնում են արագ, զարկում մեկ-մեկի.
Ձեռքներին բռնած թավիշ-թաշկինակ՝
Դիտում են հեռվից և հարս ու աղջիկ՝
Իսկույն տալիս են նրան մրցանակ,
Ով վոր նշանին նետում է ճարպիկ:
Աթոն ել յեկավ շատ անգամ անցավ,
Բայց նա Ալ-վարդից վոչինչ չստացավ.
Ձիերի կրծքից քալաղին[1] կապած՝
Դեռ փուփռալով, քշում են, թռչում,
Բայց չի նկատում ամբոխը հարբած,
Վոր խեղճ Ալ-վարդն է ամենից տրտում:
Շատերը հաղթված մեկ-մեկ հեռացան...
Մենակ Ավազը Ջիրիդը ձեռքին՝
Ինչպես հաղթության վիթխարի արձան,
Հասնում եր, զարկում փախչողի մեջքին:

[1] Մետաքսե թաշկինակ:

7

Մութն ընկավ արդեն. փայլում են
կրակներ,
Նորից հյուրերը նստում են շրջան,
Լցնելով փրփրած գինով գավաթներ,
Ցեռուն քեֆի մեջ կանչում են՝ «հա ջա՛ն»...
Նորից զուռնան է հանում աղմուկը,
Աչուղը թառին լարում է յերգեր.
Նորից յերգում են ծերն ու մանուկը
Բռնելով ամուր նոր յալլու շարքեր:
Հարբածների հետ Դևպետը ճորում
Փրփրած աչքերով ժայռե քնարին,
Ծփում է տխուր, անվերջ փրփրում,
Հազա՛ր յերանի տալով անցյալին:

8

Ցերը հողմն եր փչում, Դևպետը վշշում
Գիշերվա վայրի մի տխուր համերգ,
Իսկ պաղ կայծերով աստղը զենիթում
Դողալով դիտում մռայլ տիեզերք,—
Գիշերվա նման մի մուդ սև չալում.
Ալ-վարդը գաղտնի անտառն եր մտել,
Իսկ վաղուց ծանոթ մթին դարանում
Նրան պահապան մացառն եր պատել:
Նրա համար չեր յերկնի կապույտը,
Նա չեր դուրս յեկել իրրև զբոսանք.

Վորպես ջրվեժի թափն ու պտույտը,
Նրան քշել եր վառ սիրո հոսանք։
Ցեվ այդպես փախած մթին գիշերով
Հայրական տնից, հորիցը գաղտնի՝
Նա սպասում եր սրտի զարկերով
Իրա սիրելուն սարերին հայտնի։

9

Հանկարծ անտառի մռայլ թավուտից
Լսվեց սմբակի տրոփ ու դոփյուն,
Քրտինքը հոսեց կույսի ճակատից,
Ճերմակեց, դառավ ինչպես լեռան ձյուն,
Փայլեցին արդեն ձիու պայտերը,
Ցեվ մի ծանոթ ձայն՝ «Ա՛լ-վարդ ջան» կանչեց.
Կարմրին տվին կույսի այտերը,
Նա սրտի խորքից աղաղ հառաչեց։
Ա՛յ, քեզ ցանկալի յերջանիկ րոպե,
Ցերը կարոտ սրտեր գտնում են իրար,
Փչրելով արգելք թեկուզ յերկաթե,
Գտնում են միմյանց յերկու սիրահար։
Հեծվորը թռավ սև ձիուց շտապ,
Ալ-վարդին հանեց խիտ մացառներից,
Գրկեց ու սեղմեց կրծքին սիրատաք,
Համբույրներ քաղեց այտ ու շուրթերից։
«Ա՛լ-վարդ ջան, Ա՛լ-վարդ, Կարոն չչնջաց,
Ցե՛կ, շուտով փախչենք, քանի գիշեր է.
Գիտեմ՝ խմաստուն ձիս վոր խրխնջաց,

Փորձանք լինելը նա զգացել է.
Ա՛ռ զարարինաս, կախի՛ր քո վզից,
Նա պետք կգա քեզ գիշերը ճամփին,
Մինչև վոր թռած անցնենք անտառից,
Մինչև վոր տունս գտնենք քարափին»։
— Թեկուզ սրտումս ցցեն սուր ու նետ,
Ցես պիտի ապրեմ ու մեռնեմ քեզ հետ,—
Ասաց Ալ-վարդն ու բռնկված հույզով
Ամուր փաթաթվեց Կարոյի վզով։
Փախավ նրա հետ, գլուխն ու այտը
Հենած սևուկի փրփրուն բաշին.
Զարնվելով քարին զրնգում եր պայտը
Ցեվ սերը յերգում նրանց ականջին։
Մոռցած ծերունի հոր պատվի մասին,
Կուսական սրտից հուր եր բռնկում.
Սարերից ձորեր թև առած սև ձին
Թաղում եր դոփյունն մթին ծմակում։

10

Հանկարծ լսվում է «հարան ու տարան»,
Հարսընքատանը լռում է զուռնան.
«Կարոն Ալ-վարդին փախցրեց, տարավ,
Կարոն ամեն ինչ վոտնատակ արավ...
Թյո՛ւհ, անաղուհաց, նամարդ արարքին,
Անդանակ մորթեց իգիթ Ավագին»։
Ծերը զարկելով գտակը գետնին,
Խռված ձայնով դարձավ ամբոխին.

— Ես ութսուն ձմեռ, ես ութսուն դարուն
Ցես կյանք եմ քաշել աշխարհի վրա,
Բայց չեմ թողել, վոր Ավագի անուն
Մի թեթև բանով անգամ սևանա.
Եսքան տարի յե, վոր կռվի սովոր,
Արյունն ե յեղել ինձ համար քրտինք,
Եսքան տարի յե գլուխս ալևոր
Ձեր կերել եսպես մուր ու նախատինք.
Բայց գող Կարոյի նամարդ արարքը
Թաղեց վորսկանիս պատիվն ու փառքը:
Թեև յերդվել եմ, վոր ել վորս չանեմ,
Բայց են նամարդի մուրն ել վո՞նց տանեմ,
Ասաց ու ծերը հրացանը ուսեց
Ցեվ տըմբըտմբալով խոր ձորը վազեց.
Վո՛մանք ձիերով, վո՛մանք ել վոտով
Վազեցին հետը զանազան ճամփով:

11

Ավագ-վորսկանը չանթված ամոթով՝
Գնաց, թափառեց անտառ ու ծմակ.
Անցավ նա ամեն մի նեղլիկ ճամփով,
Ուր վորս եր արել ջահել ժամանակ.
Բայց վո՛չ փախցնողին, վո՛չ ել աղջկան
Զգտավ այնքա՛ն հետքեր փնտրելով,
«Ալ-Վարդն ու Կարոն չկան ու չկան»,
Ասում ե անհույս նա դեգերելով:
Արդեն հուսահատ, տանջված և անքուն

Անցնելով հոգնած վերջին կիրճերը,
Մի խիտ դարևոր մթին ծմակում
Հանկարծ նա գտավ ձիու հետքերը
Ցեվ լսեց, ինչպես զգուշ տրոփով
Ալ-վարդն ու Կարոն թռչում են ճամփով.
«Հե՛յ, Կա՛րո, Կա՛րո», վորսկանը գոռաց.
Սիրահարները մնացին սառած.
«Եդպես ես պատվում հին աղ ու հացը,
Եդպես ես սիրում որենքն իդիթի,
Քեզ նման նամարդ գող արարածը
Ինչի՞ չի վաղուց զոհվել գնդակի»:
Կարոն չվարած վորպես յերազում՝
Իսկույն հասկացավ, թե ով եր խոսում.
Բայց գնդակ տըժժաց, անտառը թնդաց,
Ցեվ նա գլորվեց սև ձիուցը ցած:
Ինչում ե մահը մռայլ թևերով.
Նա արդեն դրկեց իդիթ Կարոյին.
Այրված շուրթերը՝ վա՛յ ջուր կանչելով,
Կպան փակելով հուրը սիրային:
Ալ-վարդն իր գանդուր գեսերն ե փետում,
«Վա՛յ, Կա՛րո ջան, վա՛յ», անտառն ե
թնդում...

Ցեվ զարաբինան պինդ ձեռքին սեղմած՝
Ալ-վարդը կանչեց հորը զառամած.
«Ցե՛կ, ա՛պի ջան, յեկ անտառից շուտով,
Ցե՛կ, ինձ ե՛լ զարկիր մի նոր գնդակով,
Ա՛խ, անսեր կյանքը ծանր ե դեհենից.
Լա՛վ ե հեռանամ ես փուչ աշխարհից,

Լավ է միանգամ սիրելով մեռնեմ,
Քան թե միշտ անսեր թագուհի լինեմ.
Մեզանից հետո, ե՛յ սա՛րեր, ձո՛րեր,
Աղբյուր ու առու ուրախ, քչքչան,
Ցերգեցե՛ք՝ ինչպես կորան մեր որեր.
Ցերգեցե՛ք՝ «Ալ-վարդն ու Կարոն չկան»:
Սև ծխի միջից գնդակը թռավ...
Ալ-վարդը վերջին մահվան տագնապում
Սիրուն գլուխը գետնի վրա դրավ
Ցեվ լուռ գալարված խոտ է պոկոտում:
Դեռ թրթռում են նրա շուրթերին
Կյանքի գույները մեկ-մեկ մարելով,
Սփրթնած վարդը կարմիր այտերին
Հրաժեշտ է կարդում ընդմիշտ թոռմելով:
Մարում է հուրը սև-սև աչերի,
Սահում է կյանքը անհուն տենչերի.
Ծորում են կամաց արյան շիրթերը,
Սպառում կյանքի վերջին ուժերը.
Ցեվ ամեն մի նոր ծորած կաթիլով
Կարծես ասում է՝ կյա՛նք, մնաս բարով:

12

Վերջին արևը ճառագայթներով
Դեռ արևմուտքից անտառի խորքում՝
Սիրահարների լուռ դիակներով
Խաղում է անհոգ, փարվում ու դրկում.
Տրաքոցի վրա հեռու ձորերից

Վազելով հասավ հարսընքավորը,
Արյուն-արցունք է թափվում աչքներից,
Մենակ չի լալիս ծեր հանցավորը:
Դղզված դեսեր, գնդակը կրծքին՝
Սարսափ եր ազդել Ալ-վարդն ամենքին.
Ոտար, բարեկամ վողբում են նրան,
Անեծք թափելով Ավագի վրան.
Կանչում են նրան. «Ինչի՞ չես գալիս,
Ինչի՞ չես դու յել մի բերան լալիս»...
Բայց նրանց լացը, ճիչն որհասական
Դարձյալ չեն ազդում քարացած ծերին,
Ցեվ անշարժ կանգնած ծերունի հսկան՝
Նայում է միայն նրանց կոծերին:

13

Անտատան հենված նա նվիրական
Հին աղ ու հացի պատվի որենքին՝
Ել չեր ափսոսում միակ աղջկան.
Այլ բան եր ղղում խղճի հոգին:
Թեև նա վերջին որը ծերության
Ներկեց իր միակ վորդու արյունով,
Բայց համոզված եր, վոր արդարության
Չի դավաճանել դեռ վոչ մի բանով.
Վոր ափսոսանքը և լացն ու կոծը
Ել չեն բուժելու սրտի սև խոցը,
Այլ նրան միայն որենքն խղճի
Իր անդարձ ուժով մի որ կդատի:

Մերթ թռչում է նա դեպի ապագան,
Ուր սավերներով դատի պիտի դան
Տմարդ սերնդի ոգեղ արարքը
Ցեվ հին լեգեթի պատիվն ու փառքը.
Մերթ լուռ, քարացած, առանց արցունքի
Դեպի նոր բանող բլուրն է դառնում,
Մերթ նրա դեմքը թաղվող հանցանքի
Տխրության ամպ է հանկարծ մռայլում.
Մերթ անշարժ կանգնած հրացանը ձեռին,
Ինչպես դարավոր լեռների արձան,
Նա հուժկու մեջքը դեմ տված ժայռին՝
Նայում է թաղմանն անթարթ ու անձայն:
Ցեվ հին կնճռոտած, ապառաժ դեմքով
Կարծես ծաղրում է դեռ լալկաններին,
Վորոնք հանձնում են հողին խնամքով
Իր աջող վորսած սիրականներին:

14

Հանկարծ զոռ տալով յերկար չիբուխին,
Նա վերջը դարձավ լալկան ամբոխին.
«Հե՛յ գիդի հա՛, հե՛յ, լեգե՛թ ժամանակ,
Անցար, գնացիր, թողիր ինձ մենակ.
Ո՞ւր են առաջվա սերն ու հավատը,
Պատերից դրած որենքն առաջին.
Լեգեթի չեր ասվում են տղամարդը,
Վոր չեր խոնարհվում սուրը աղուհացին.
Արար աշխարհի որենքների դեմ

Ցես նրանից մեծ որենք չգիտեմ:
Ցեվ ի՞նչ արարած, ի՞նչ ադամվորդի,
Կոտրելով պատիվն, անունն լեգեթի,
Ապրում է մենակ ինքը նամուսով,
Դրացուն պատվից գցելու հուսով:
Թեկուզ աշխարհն ել դուլ անի իրան,
Իսկի տղամարդ չեմ ասել նրան:
Մարդիկ մանրացան մժեղի նման.
Արցունքն է դառել ցավերին դարման.
Բայց վողբն ու լացը ել ինձ չեն ազդել,
Ծով ել վոր դառնամ, արցունք չի կաթել:
Հե՛յ, գիդի հա՛, հե՛յ, լեգե՛թ ժամանակ,
Անցար, գնացիր, թողիր ինձ մենակ:
Հեռացե՛ք դուք ել, թողե՛ք մի անամ
Ժայռ պապերիս հետ, յես ել քարանամ»:
Ասաց ու լռեց ծերը գլխակոր,
Ինչպես վիթխարի մի ժայռի բեկոր:

15

Են հին վանքերի բարձր գմբեթից
Զեն հնչում մահվան զանգի ձայները,
Ցեվ չարականից, բուրվառ ու խաչից
Զրկվեցին նրանց պաղ մարմինները.
Հարսընքավորի վողբն ու լացը
Ցեվ սև նժույգի խորին թառանչը,
Աչնան հողմի հետ արձագանք տալով,
Ցերդում են ձորում թաղման չարական,

«Ա՛խ, Ալ-վա՛րդ, Կարո՛», լուռ հառաչելով,
Փորում են նրանք մի խոր գերեզման,
Ցեվ սիրակորույս զույգ նշխարները
Հանձնում են ցավով հայրենի հողին.
Իսկ բլուր դարձած սիրահարները
Պատմում են սիրո արկածն անցնողին։

16

Դառն ափսոսանքով ամբոխը դնաց.
Անտառում մենակ վորսկանը մնաց.
Նա քաշվեց հեռո՛ւ մութ ծմակները,
Հսկա ժայռերին յեղավ դրացի,
Ուր չեն վորոտում վո՛չ դնդակները,
Վո՛չ լսվում ձայնը մարդկության լացի.
Գլուխ չթեքած մարդկանց որենքին՝
Նա յեղբայրացավ հավերժ տարերքին։

ՎԵՐՋԱԲԱՆ

Ցերը վոր բացվում են վայրի վարդերը,
Ցերը զարնան բույրով ձորն ե կանաչում,
Գալիս են այնտեղ մատաղ կույսերը,
Ալ-վարդին իրանց սերը մրմնջում.
Մի-մի կտոր շոր թուփից կապելով,
Հիշում են նրանք արցունք թափելով.
Ցեվ ա՛յն մամռապատ մենակ բլրակը
Նոր կյանք ե առնում հին կաղնու տակը։

Ցերը յեղջերուն ե այնտեղ բառաչում
Կամ յեղնիկն անհոգ վրայից թռչում,
Վորսորդն ել՝ աղբրից պաղ ջուր խմելով,
Անցնում ե, վորսի հետքից վազելով—
Հանկարծ ցույց տալով բլրակն ընկերին,
Դառնում ե վաղուց անցած դեպքերին.
— Դու ջահել ես դեռ, լավ չես ճանաչում,
Ալ-վարդն ու Կարոն այստեղ են հանգչում։
Ո՞ւր են առաջվա մարդիկն ու սերը,
Ավագ-վորսկանի արած վորսերը...
Ասում են, յերբ վոր ամպի փեշերը
Փռվելով սարից, ձորերն են գրկում,
Լսվում ե հանկարծ մթին գիշերը
Մի խոր հառաչանք ժայռերի կրծում.
Ու ամպերի մեջ Ավագ-վորսկանը
Գալիս ե հսկում իր աղջկանը.
Ցեվ նորից ծածկած նա վիշտը ներսից՝
Փախչում ե նամարդ մարդկանց յերեսից։

ՀՈԽՀ-ՈՐ

182

ԼՈՒՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ն. Զարյան—*Սաքո Միկինյան*
2. Ա. Վշտունի—*Ռամ-Ռոյ*
3. [redacted]
4. Ս. Զորյան—*Փորձանք*
5. Հ. Թումանյան—*Սասունցի Դավիթ*
6. Գ. Սարյան—*Պահակ*
7. [redacted]
8. [redacted]—*Քեռի Դավոն*
9. Հ. Մելիքյան—*Աղջիկը՝ մորու փունջը ձեռին*
10. Սիրաս—*Թարխման*
11. Սիրաս—*Ամաբ*
12. [redacted]
13. Ա. Շահնազարյան—*Են սև որերից*
14. Ս. Տարոնցի—*Աղավիա*
15. [redacted]
16. Հ. Միրաքյան—*Լալվարի վոքսը*

ՀՀ Ազգային գրադարան
NL0352533

43975